«Ֆասթ Բանկ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ, Գ. Հովսեփյան 32/6 (+374 10) 51 00 00

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

## KFW ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| | Միկրո | Միջին |
|---|---|---|
| Վարկի նպատակը | Գյուղատնտեսական (կապիտալ և խառը ներդրումների նպատակով)* | |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ | |
| Վարկի գումար ** | 300 000-10 000 000 ՀՀ դրամ | 2 000 000-160 000 000* ՀՀ դրամ<br>• Սկսնակ բիզնեսին տրամադրվող վարկի գումարը չի կարող գերազանցել 5 մլն 000 000 ՀՀ դրամը<br>• (Բիզնեսը համարվում է սկսնակ, երբ պոտենցիալ վարկառուն նախորդող 6 (վեց) ամիսների ընթացքում չունի գործող որևէ այլ բիզնես (ոչ գյուղատնտեսության, ոչ էլ այլ ոլորտներում) |
| | Խառը ներդրումներով վարկավորման դեպքում շրջանառու միջոցների ձեռքբերման նպատակով տրամադրվող վարկային միջոցների մասնաբաժինը չի կարող գերազանցել վարկի գումարի 30%-ը | |
| Վարկի ժամկետ | • Նվազագույն ժամկետ՝ 24 ամիս<br>• Առավելագույն ժամկետ՝ 60 ամիս | •Նվազագույն ժամկետ՝ 24 ամիս,<br>•Առավելագույն ժամկետ՝ Բանկում տվյալ պահին Բանկի սեփական ռեսուրսներով շրջանակներում գործող առավելագույն ժամկետ: |
| Մայր գումարի վճարման արտոնյալ ժամկետ | 3-18 ամիս՝ վարկի գործողության ողջ ընթացքում<br>Արտոնյալ ամիսների հաջորդական լինելը պարտադիր պայման չէ | |
| Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք ** | 12% | •Մինչև 60 ամիս՝ 12%<br>•Սկսած 61-րդ ամսից՝ Բանկում տվյալ պահին Բանկի սեփական ռեսուրսներով շրջանակներում վարկի պայմանագրային ժամկետին համապատասխան գործող տարեկան տոկոսադրույք: |

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

| | | |
|---|---|---|
| | ** «Գերմանահայկական հիմնադրամ» Ծրագրի կառավարման գրասենյակի կողմից վարկը չորակավորելու կամ տրամադրված վարկի որակավորումը դադարեցնելու, ինչպես նաև Վարկառուի կողմից վարկային միջոցները ոչ նպատակային օգտագործելու դեպքում վարկը համարվում է տրամադրված Բանկի սեփական ռեսուրսներով, որից հետո վարկը շարունակում է գործել Բանկում տվյալ պահին Բանկի սեփական ռեսուրսներով շրջանակներում վարկի պայմանագրային ժամկետին համապատասխան գործող տարեկան տոկոսադրույքով: | |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | 12.64 - 12.66% | 12.69 - 15.94% |
| Վարկի տրամադրման վճար | Չի սահմանվում | |
| | | |
| Ժամկետանց մայր գումարի տույժ | 0.1% օրական | |
| Ժամկետանց տոկոսի տույժ | 0.13% օրական | |
| Վարկի վաղաժամկետ մարման տույժ | Վարկի վաղաժամկետ մարման դեպքում կիրառվում է տույժ՝ վաղաժամկետ մարվող գումարի 5%-ի չափով:<br>Կիրառելի է 5 000 001 ՀՀ դրամ և ավելի պայմանագրային գումարով վարկերի դեպքում | |
| Վարկառու | 18-65 տարեկան ֆիզիկական անձ, անհատ ձեռնարկատեր, իրավաբանական անձ | |
| Մարման եղանակ | • Անուիտետային (մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում),<br>• Դիֆերենցված (մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում),<br>• Անհատական վճարումների ժամանակացույց,<br>• Մարման եղանակը՝ ըստ հաճախորդի ընտրության: | |

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

| | | | |
|---|---|---|---|
| Ապահովման միջոց/Գրավի առարկա | 300 000-3 000 000 ՀՀ դրամ | 3 000 001-10 000 000 ՀՀ դրամ | • Անշարժ գույք (շինություն) և/կամ տրանսպորտային միջոց** (Հիփոթեքի պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով),<br>• Վարկային կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ, այդ թվում գյուղ տեխնիկա**:<br><br>•**Տրանսպորտային միջոց, որի արտադրման տարեթիվը գրավադրման պահին չպետք է լինի ավելի հին, քան՝<br>•ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,<br>•այլ երկրների արտադրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի: |

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

<table>
<tr>
<td></td>
<td>• Առնվազն 1 ֆիզիկական անձ (18-65 տարեկան), ով չունի գործող ժամկետանց պարտավորություններ:<br>• Երաշխավորը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ գրանցված աշխատակից:<br>• Երաշխավորի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:</td>
<td>• Առնվազն 2 ֆիզիկական անձանց (18-65 տարեկան) կամ ԱՁ-ների երաշխավորություններ, որոնք չունեն գործող ժամկետանց պարտավորություններ:<br>• Երաշխավորներից առնվազն մեկը պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ գրանցված աշխատակից<br>• Երաշխավորներից յուրաքանչյուրի վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br>• Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ:</td>
<td></td>
</tr>
<tr>
<td colspan="4">Ավտոմեքենան ենթակա է պարտադիր «Կասկո» (ֆիզիկական վնաս և առևանգում) ապահովագրության հօգուտ Բանկի՝ առնվազն վարկի գումարի չափով և վարկի գործողության ամբողջ ընթացքում յուրաքանչյուր տարի ապահովագրական պայմանագրի վերակնքման պայմանով: Ապահովագրությունն իրականացվում է վարկի գործողության ողջ ընթացքում Վարկառուի հաշվին:</td>
</tr>
<tr>
<td>**Գյուղ տեխնիկա</td>
<td colspan="2">Չի սահմանվում</td>
<td>Կոմբայն, տրակտոր, բեռնատար, էքսկավատոր և այլ տեխնիկա, որոնց ընդունելիության չափանիշները որոշում է Բանկը:</td>
</tr>
<tr>
<td>Վարկ/Գրավ առավելագույն արժեք</td>
<td colspan="2">Չի սահմանվում</td>
<td>Համաձայն Հավելված 1-ի:</td>
</tr>
</table>

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

| | | |
|---|---|---|
| **Գրավի գնահատում** | **Չի սահմանվում** | **•Գրավը ենթակա է գնահատման Բանկի հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Բանկի աշխատակցի կողմից՝ կախված վարկի գումարի չափից:**<br>**•Բանկի աշխատակցի կողմից գնահատումն իրականաց-վում է անվճար:** |

**Ծանոթություն**

** Միևնույն վարկառուին տրամադրվող վարկերի մնացորդների հանրագումարը չի կարող գերազանցել 160 մլն ՀՀ դրամը:*

**1.** Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

1.1. Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.

1) Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 10 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 26 000 ՀՀ դրամ,
3) Նոտարական վավերացման վճար՝ 16 000-20 000 ՀՀ դրամ,
4) Գույքի գնահատման վճար՝ 15 000-25 000 ՀՀ դրամ:

1.2. Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.

1) Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3 000-4 000 ՀՀ դրամ,
2) Գրավի պետական գրանցման վճար՝ 2 000-3 000 ՀՀ դրամ,
3) Գրավի ապահովագրություն՝ վարկի գումարի 2.5%-ի չափով,
4) Նոտարական վավերացման վճար՝ 11 000-12 000 ՀՀ դրամ,
5) Գույքի գնահատման վճար՝ սկսած 5 000-20 000 ՀՀ դրամ:

**2.** Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել

**3.** Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի մնացորդի նկատմամբ՝ ընդունելով տարին 365 օր:

**4.** Վարկը տրամադրվում է անկանխիկ եղանակով:

**5.** Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև Բանկի հետ համագործակցող ապահովագրական ընկերությունների և անկախ գնահատողների ցանկը սահմանվում են առանձին Հավելվածներով:

**6.** Վարկը տրամադրվում է Բանկի Գլխամասային գրասենյակում, «Հին Նորք», «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Մովսես Խորենացի», «Սեբաստիա», «Կոմիտաս», «Բաղրամյան» , «Թումանյան», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Շենգավիթ», «Ալեք Մանուկյան», «Տիգրան Մեծ», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Սևան», «Գավառ», «Անի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան», «Չարենցավան», «Ալավերդի» «Քաջարան», «Նոր Նորք» մասնաճյուղերում:

**7.** Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններ.

7.1. Վարկառուի, Գրավի և Երաշխավորի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
7.2. Վարկառուն վարկի տրամադրման պահին չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություններ,

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

7.3. Վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը,

**8.**Վարկի մերժման գործոններն են Վարկառուի և/կամ Գրավի և/կամ Երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

**9.**Վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացումը և Վարկառուին տեղեկացումը կատարվում է պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

**10.** Վարկի տրամադրում՝ պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:

**11.** Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Բանկի կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Բանկի պայմանագրով սահմանված վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Բանկը իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

**12.** Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Բանկի պաշտոնական կայքում՝ **www.fastbank.am**, ինչպես նաև տեղադրված են Բանկի մասնաճյուղերում:

**13. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԲԱՆԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ՝ www.fastbank.am:**

**14. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՆ ՎԱՐԿԻ ՄՆԱՑՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ԻՍԿ ՏՈՒՅԺԵՐԸ/ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԵՎ/ԿԱՄ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑՎԱԾ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՐՔԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ, ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԻՄԱՑ 3-ՐԴ ԱՆՁԱՆՑ ՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ:**

**15. ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**

**16. ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ ՊԱԿԱՍ Է ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԳՐԱՎ ԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻՑ, ԱՊԱ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍ ԳՈՒՄԱՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ:**

**17. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԱՔՌԱ ՔՐԵԴԻՏ ՌԵՓՈՐԹԻՆԳ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**

**18. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՈՐՈՆՑ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋՈՒՄ՝ www.fastbank.am: ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՄԵԿ ԱՄԻՍԸ, ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԲԽՈՂ ՍՊԱՌՈՂԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ:**

*Հաստատված է*
*Տնօրինության 19.02.2026-ի նիստի*
*Թիվ DEC 12-16 արձանագրությամբ:*
*Ուժի մեջ է մտնում 20.02.2026թ.-ից:*

19. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ՝ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԿԱՊԻ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ:

20. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է՝ www.fininfo.am:

21. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ:

22. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՄԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

23. ՀԱՃԱԽՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՌԱՆՑ ՈՐԵՎԷ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻՈՐԵՆ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴՐԱ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԵԹԵ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՎԵԼԻ ԵՐԿԱՐ ԺԱՄԿԵՏ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԷ:

24. ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՑ ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԱՏԱՆԱԼՈՒ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԶՐԿՎԻ ԻՐ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔԻՑ: